ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

25 հունվարի 2019 թվականի № 26-Ն

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 58-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը և «ՆԱԳԷՄ» ՍՊ ընկերության 2018 թվականի օգոստոսի 31-ի թիվ 15/18 դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.«ՆԱԳԷՄ» ՍՊ ընկերությանը տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման հավաստագիր:

2. Ուժը կորցրած ճանաչել՝ «ՆԱԳԷՄ» ՍՊ ընկերության ՀՀ Լոռու մարզի Սիսիբերդի տոնալիտների հանքավայրի 1-ին տեղամասի շահագործման համար, 2012 թվականի հոկտեմբերի 31-ին վերածևակերպված օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/152 թույլտվությունը, թիվ ԼՎ-152 լեռնահատկացման ակտը և լուծել 2012թ-ի հոկտեմբերի 31-ի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման ՊՎ-152 պայմանագիրը:

3. Ընդերքի գործակալության պետին՝

- 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը հրաժարման հավաստագիրը ստանալու մասին.
- ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

1/24/2019

X

VERIFIED OCSP 24-Jan-19 18:45:11 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118